ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N42-Ա
02 ԱՊՐԻԼ 2021Թ
ԿԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1.5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջառիթափի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի հետ կնքված 2016 թվականի ապրիլի 4-ի N296 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի ա) ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի ապրիլի 5-ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջառիթափի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Կարինե Գևորգյանին ազատել զբաղեցրած պաշտոնից, լուծել նրա հետ կնքած 2016 թվականի ապրիլի 4-ի N296 աշխատանքային պայմանագիրը:
2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջառիթափի Ա.Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի ուսումնադաստիրակչական աշխատանքների գծով փոխտնօրեն Փառանձեմ Էրնստի Աբելյանի վրա:
3. Հաշվապահին՝ վճարումը կատարել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական

և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կազմակերպել հանձնման- ընդունման աշխատանքները:

4/2/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ